

թէ ինչո՞ւ Ջուղայեցի, որ նախապէս ուղղակի Հոռոմի իշխանութեան կը գրէր, յանկարծ դադրեցաւ գրելէ եւ Առաքելի միջնորդութեամբ սկսաւ գրել: Չկասկածեցա՞ն երբ Առաքել կը գրէր թէ կ'ուզէր Հոռոմ գալ ուխտ ունենալով ի մէջ այլոց Հայոց «մուրեալ ազն որք ոչխարք տեառն են ածեալ տեսից ի փարախ նորին (Հոռոմի վեհապետին), եւ եթէ յայնմիկ միջնոցի դայցէ պատրիարզն մեր (Ջուղայեցին), կամ թէ լուիցեմք զհամբաւ դալտեան նորին բարեք է»: Ասով Առաքել գետին կը պատրաստէր իբր թէ Յակոբ Ջուղայեցիէ գալիք ապագայ նամակին համար, որ կրցաւ մէջտեղ հանել 23 Նոյեմբեր 1679 թուագրելով եւ 4 Մարտ 1680ին ալ «թարգմանելով»:

Այսպէս Առաքել ալ Ոնոփրիոսի, Օրիի եւ ուրիշներու հետ անձնական իրենց հաշիւներուն համար հիւսեցին ստայն մը որ դեռ շատերը չի թուրթեան կը մասնէ: Ասոնք կրնան իրարու մասին իմացած ըլլալ, թէ եւ կարելի չէ որ դործակցութեան որեւէ նշոյլ ըլլայ: Սակայն ըսեմ որ ուղղակի կամ անուղղակի օգտուած են իւրաքանչիւրին բերած ստապատում նպաստէն: Օրինակ Ոնոփրիոսը ստայոգ ամբաստանութիւններէն՝ տարածուած Ջուղայեցիի դէմ անոր թշնամիներէն, անտարակոյս իմացուցաւ Օրիէ անոր նիւթ տալով իր կեղծուպատիր շահադիտական գործունէութեան՝ մղուած անձնական փառասիրութենէ:

Բնական է ժամանակուան պայմաններն էին որ կը ստեղծէին Ոնոփրիոս մը որ դոյութիւն չէր կրնար ունենալ եթէ չըլլար Եղիազար Այնթապցիի հակամարտութիւնը Ջուղայեցիի դէմ: Օրին պիտի չյանդուէր իր խարբեայութեան ձեռք դարնել եթէ պատրաստ հող չըլլար ատոր համար: Առաքել պիտի չխորհէր կատարել իր ըրածը եթէ չբաջալերուէր Հայկական իրականութեան հանդէպ կոյրերէ, որոնք կը խորհէին որ կաթողիկոսի մը կամ կաթողիկոսներու հաւատադարձութիւնը կարելի էր պարտադրել ժողովրդին ալ վրան:

Առաքել Շոռոթեցի Բոպիկ սակայն տարրեր կը ներկայացուի Հ. Գր. Վ.

Գալէմքեարեանէն 1914 Գեկտեմբերի Հանդէս Ամսօրեայի մէջ (էջ 709-710) ուր յարգելի եւ վաստակաւոր հայրը կենսագրականը կը ջանայ տալ «Առաքել Վ. Շոռոթեցի, Բոպիկ Արքեպ. Երնջակայ Գաւառին (1613-1680)»: Հոս իբր առաջին աղբիւր կը ներկայացուի «Ստեփանոս Ռօշքայի ժամանակագրութենէն. «1682. Առաքել Վ. Եպս. ն Երնջակայ գաւառին, այր սրբակրօն, անինչ, եւ հռչակաւոր քարոզատու, որ բողոտամբ շրջելով ի քարոզութեան, բոպիկ կոչեցաւ, եւ վասն անընչութեանն, զի գորինչ տային նմա պարգեւ, որպէս սովոր են առնել Հայք, աղքատաց բաշխէր, անարձաք վարդապետ անուանեցաւ: Սա ի Յակոբայ կաթողիկոսէն երկիցս առաքեցաւ ի Հոռոմ վասն հաստատելոյ զմիաբանութիւնն, ուր եւ վճարէ զկեանս իւր, եւ իբր սուրբ թաղի յեկեղեցւոյ Հայոց Սուրբ Մարիամու Եգիպտացւոյն, որ եւ այժմ պատուի յուխտաւորաց»:

Նախ եւ առաջ Ռօշքան կը սխալի Առաքելի մահուան թուականին մասին: Հ. Գալէմքեարեան իր այդ յօդուածին մէջ մեղի կուտայ տապանագրութիւնը Առաքելի գերեզմանաքարին ուր կ'ըսուի «Յիշեալիք ՋՇոռոթցի բորիկ Առաքել վարդապետն որ նախ ձեռնագրեալ եպս. Փահրապատու եւ ի թվին ՌՌԾԹ դաւանեալ ի Հոռոմ զհաւատն ուղղ(ափառ) եղեւ յետոյ Արքեպ. Նախճավանոյ եւ առաջնորդ վանաց եւ վիճակին Երնջակայ սրբոյ Կարապետի իսկ ի թվին ՌՌՀԹ դարձեալ առաքեցաւ այսր ի տեառնէ Յակոբայ ձուղաեցոյ կաթողիկոսէն ուղղափառէ վասն ընդհանրականութեան Հայոց աղբին. Չվիշտ եւ զհալածանս կրեաց բաղումս. դոյով ամաց Կէ (67) լի արդեամբք եւ աշխատանօք հանգեաւ ի քրիստոս աւուր Զ (6) Օղոստոս ՌՌԶ եւ Հայոց ՌձԻԹ»:

Մենք առ այժմ տապանագրութեան մէջ յիշուած մահուան թուականը նկատի կ'առնենք իբր վաւերական, այսինքն Օղոստոս 6, 1680 եւ Հայոց 1129, որ հաւասար է Քրիստոսի 1680ին: Այսպէս Ռօշքա կ'երեւի իմացած էր Առաքելի մահուան թուականին մասին եւ այդ իսկ պատճառաւ անդիտութեամբ 1682 սխալ